Հաստատված է

«Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի

25 օգոստոս 2014 թ. նիստում

Ռեկտոր՝ Ս.Ա. Սեդրակյան

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Մշտադիտարկման նպատակն է գնահատել ծրագրի մատուցման որակն ու ակադեմիական ստանդարտները ծրագրի իրականացման ընթացքում և նախաձեռնել բարելավող անհրաժեշտ գործողություններ:

Մշտադիտարկման խնդիրներն են՝

- գնահատել ծրագրի/առանձին դասընթացների սահմանված նպատակների և ակնկալվող ելքային արդյունքների ձեռքբերման ընթացքը և արդյունավետությունը
- բացահայտել ծրագրի թուլություններն ու իրականացման դժվարությունները և առաջարկել անհրաժեշտ ճշգրտումներ ծրագրում և դասընթացներում:
- գնահատել դասավանդման և ուսումնառության գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների արդիականությունը, բացահայտել ռեսուրսային կարիքները
- գնահատել ծրագրի հիմնական քանակական բնութագրերի (ընդունելություն, համակազմ, մաղումներ, առաջադիմություն, շրջանավարտություն, համապատասխան աշխատատեղերի ձեռքբերում) համապատասխանությունը նախօրոք սահմանված թիրախային ցուցանիշներին:

Մշտադիտարկման հիմնական միջոցները

- Ուսանողների՝ ծրագրից բավարարվածության ուսումնասիրում, որն արտացոլում է ուսանողների բավարարվածության մակարդակը ծրագրի (դասընթացների) բովանդակության և մատուցման տարբեր ասպեկտներից, ուսանողների տեսանկյունից առավել կարևոր (հաջողված) և առավել անբավարար (անհաջող, ավելորդ) ծրագրային տարրերը, հետևաբար նաև՝ ակնկալվող ծրագրային փոփոխությունները:
- Շրջանավարտների և գործատուների՝ ծրագրից բավարարվածության ուսումնասիրություն, որն արտացոլում է ծրագրի համապատասխանությունը տվյալ մասնագիտության աշխատատեղերի պահանջներին, ծրագրի արդիականությունը, ծրագրի հեռանկարները կադրային պահանջարկի տեսանկյունից:
- Արտաքին փորձաքննություն, որը կոչված է անկախ և օբյեկտիվ գնահատական տալու մշակված ակադեմիական ստանդարտների (ելքային

արդյունքների) ապահովման վիճակին և ծրագրի մատուցման որակական ցուցանիշներին:

- Ծրագրի հիմնական քանակական բնութագրերի վերլուծություն՝ սահմանված վիճակագրական ցուցանիշների միջոցով, որն ընդգրկում է ծրագրի ընդունելության, համակազմի, շրջանավարտության, ռեսուրսների, ուսանողների առաջադիմության և ատեստավորման ցուցանիշների ուսումնասիրությունը:
- Մշտադիտարկման արդյունավետ իրականացման համար կարևորվում է անհրաժեշտ տեղեկատվական հոսքի ապահովումը տեղեկատվության աղբյուրների (ուսանողների հարցումներ, արտաքին փորձաքննություն իրականացնող կառույցներ) միջև:
- Մշտադիտարկման գործընթացը, որը սովորաբար իրականացվում է տարեկան պարբերականությամբ, ընդգրկում է բուհի բոլոր կրթական ծրագրերը և դրանց դասընթացները և ավարտվում է որակի մշտադիտարկման հաշվետվությունների կազմումով՝ ծրագրի, ստորաբաժանման (մասնաճյուղի, դեպարտամենտի, ֆակուլտետի), բուհի մակարդակներում: Որակի մշտադիտարկման հաշվետվությունները պարունակում են կոնկրետ երաշխավորություններ (գործողությունների պլաններ) ծրագրերի առանձին տարրերի բարելավման ուղղությամբ: Կրթական ծրագրերի/մասնագիտությունների մեծ բազմազանության պայմաններում ոչ բոլոր ծրագրերի մշտադիտարկումն է ավարտվում ամենամյա պաշտոնական հաշվետվություններով:
- Առաջարկվում է մշտադիտարկման ինքնուրույն տարեկան հաշվետվություններ պահանջել՝
  -նոր կրթական ծրագրերի առաջին տարվա համար
  -համատեղ կրթական ծրագրերի համար
  -ռիսկային գործոնով կրթական ծրագրերի համար, որոնց վերաբերյալ մտահոգիչ փաստեր են հայտնաբերվել ուսանողների կամ արտաքին փորձագետների կողմից
  -ընդունելության և առաջադիմության ցածր ցուցանիշներ ունեցող ծրագրերի համար:
- Մշտադիտարկումը սովորաբար իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և ընդգրկում է նախորդ ուսումնական տարվա բնութագրական տվյալների հավաքումը և համեմատական վերլուծությունը: Գործընթացը, որպես կանոն, համապատասխան ստորաբաժանումների պատասխանատվության շրջանակներում է, իրականացվում է աշխատանքային խմբերի, արտաքին փորձագետների, ստորաբաժանումների ղեկավարության և համապատասխան հանձնաժողովների համատեղ ջանքերով: Առանձին ծրագրերի և ստորաբաժանումների որակի մշտադիտարկման հաշվետվությունները հետագայում սինթեզվում են որակի մշտադիտարկման համաբուհական հաշվետվության մեջ, որը ձևավորվում է բուհի տարեկան հաշվետվությանը զուգընթաց: